Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Սամվել Հարությունյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Մինսկ (Բելառուսի Հանրապետություն), 2019թ. մարտի 4-ից 7-ը

4. Հրավիրող կողմը

Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողով (այսուհետ՝ ՄԱԿ ԵՏՀ)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն «Արևելյան Եվրոպայի և Կովկասի ինովացիոն, արագ զարգացող ձեռնարկությունների խթանում» խորագրով աշխատաժողովի աշխատանքներին

6. Քննարկված թեմաները

- Գիտության և ինովացիոն ոլորտներում ՄԱԿ ԵՏՀ մոտեցումները՝ Կովկասի և Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային երկրների համար,
- «Ենթատարածաշրջանային գիտաինովացիոն քաղաքականության ընդհանուր նկարագիրը» ՄԱԿ ԵՏՀ նոր զեկույցի նախապատրաստական աշխատանքները,
- Հայ-բելառուսական համագործակցություն գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտներում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

«Արևելյան Եվրոպայի և Կովկասի ինովացիոն, արագ զարգացող ձեռնարկությունների խթանում» խորագրով աշխատաժողովին բացման խոսքով հանդես են եկել Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողովի ինովացիոն քաղաքականության վարչության պետ Ա. Իոնսոնը, ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը, Բելառուսի Հանրապետության նախագահին կից Կառավարման ակադեմիայի ռեկտոր Գ. Պալչիկը, Եվրասիայի տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության ներկայացուցիչ Դ. Կվադբեկը և Բելառուսի Հանրապետության էկոնոմիկայի փոխնախարար Յու. Չեբոտարը:

Աշխատաժողովի ընթացքում Սամվել Հարությունյանը հանդես է եկել նաև առանձին զեկույցով՝ «Ինովացիոն քաղաքականության նորագույն մոտեցումները և ինովացիոն, արագ զարգացող ձեռնարկությունները Հայաստանում» թեմայով:

Աշխատաժողովի շրջանակներում ՀՀ ԿԳՆ ԳԿ նախագահ Սամվել Հարությունյանն ունեցել է մի շարք հանդիպումներ ՄԱԿ ԵՏՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ, ինչպես նաև գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտների փորձագետների և մասնագետների հետ: Այդ հանդիպումների ընթացքում առավել մանրամասնորեն են քննարկվել Հայաստանի Հանրապետությունում գիտաինովացիոն ոլորտի և տնտեսության մասնավոր հատվածի համագործակցության զարգացման ուղիները և հեռանկարները:

Մինսկ այցի շրջանակներում ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն այցելել է նաև Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտե, որտեղ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի ոսկե մեդալներ է հանձնել Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի նախագահ, տնտեսագիտության դոկտոր Ալեքսանդր Գենադևիչ Շումիլինին (ՀՀ ԿԳՆ ԳԿ նախագահի հրաման N55-Ա/Ք, 03.12.2018թ.) և Բելառուսի գիտությունների ազգային ակադեմիայի նոր նյութերի քիմիայի ինստիտուտի տնօրեն, Բելառուսի գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս,

քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Ենոքի Աղաբեկովին (ՀՀ ԿԳՆ ԳԿ նախագահի հրաման N06-Ա/Ք, 24.01.2019թ.)՝ միջազգային համագործակցության զարգացման գործընթացում ունեցած ավանդի և ներդրումների, մասնավորապես, հայ և բելառուս գիտնականների գիտակրթական համագործակցության, բարեկամական կապերի ամրապնդման և զարգացման գործում ունեցած ազդեցիկ դերակատարման համար:

Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեում ունեցած հանդիպումների ընթացքում քննարկվել է հայ-բելառուսական համագործակցության շրջանակներում իրականացվող գիտական ծրագրերի իրականացման ընթացքը: Երկուստեք հաստատվել է, որ առաջիկայում ծրագրված նոր մրցույթների համար նախատեսված ֆինանսական ծավալները չեն նվազելու: Ընդգծվել է գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտներում հայ-բելառուսական համագործակցության բարձր մակարդակը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Աշխատաժողովի արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել ս.թ. ամռանը ՄԱԿ ԵՏՀ ներկայացուցիչների, ինչպես նաև փորձագետների Հայաստան այցի վերաբերյալ՝ «Ենթատարածաշրջանային գիտահինովացիոն քաղաքականության ընդհանուր նկարագիրը» խորագրով ՄԱԿ ԵՏՀ նոր զեկույցի նախապատրաստման գործընթացը սկսելու նպատակով:

Նախնական պայմանավորվածության համաձայն ՄԱԿ ԵՏՀ նոր զեկույցը լույս կտեսնի 2020 թվականի ամռանը:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել այն մասին, որ 2020 թվականի աշնանը Հայաստանում անցկացվի Հայաստան-Ռուսաստան-Բելառուս եռակողմ սեմինար-խորհրդակցություն՝ նվիրված ԵԱՏՄ և ԱՊՀ շրջանակներում գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտներում համատեղ եռակողմ համագործակցությունն ընդլայնելու և որակապես նոր, բարձր մակարդակի գործունեություն ծավալելու խնդիրներին:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվել է 2019 թվականի ամռանը ՄԱԿ ԵՏՀ մասնագետների Հայաստան այցի շրջանակներում կազմակերպել խորհրդատվական հանդիպումներ՝ նոր մարտահրավերների ակտիվացման ժամանակաշրջանում Հայաստանի գիտական և ինովացիոն ոլորտների զարգացումը խթանելու ուղիների մասին: ՄԱԿ-ի կողմից 2014 թվականին հրատարակված նախորդ զեկույցում Հայաստանի Հանրապետության գիտաինովացիոն զարգացման խթանմանը նվիրված խորհրդատվություններն ու առաջարկությունները խիստ բարենպաստ ազդեցություն են թողել Հայաստանի Հանրապետության գիտական և ինովացիոն ոլորտների զարգացման վրա:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

11.03.2019թ.